

2659

1068

ՀԵՆՐԻԿ ԴՐՈԽՄԱՆԴ

ԱՄԵՆԱԳԵՂԵՑԻԿ  
ԲԱՆԸ ԿԵԱՆՔՈՒՄ



Անդրիերէնի գերմաներէն  
փոխադրութիւնից թարգմանեց

ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ՍՄԲԱՏԵԱՆՑ



ՎԱԴԱՐՃԱՊԱՏ

Տպարան Մայր Աբովյ Ա. Էջմիածնի

1911

205  
7-99

23 SEP 2009

205  
F-99 Կ

1068

ՀԵՂԻ ԴՐՈՒՅՄՈՎՆ



ԱՄԵՆԱԳԵՂԵՑԻԿ  
ԲԱՆԸ ԿԵԱՆՔՈՒՄ



500  
000  
2068

Անգլիերէնի գերմաներէն  
փոխադրութիւնից թարգմանեց  
ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ՍՄԲԱՏԵԱՆՑ



(Արտապահ «Արարատ» ամսագրից)

-----

Վ.Ա.Դ.Ա.Ր.Շ.Ա.Պ.Ա.Տ.  
Տպարան Մայր Արոռոյ Ս. Էջմիածնի  
1911

04 APR 2013

2659

# Նորին Վեհափառութեան

ԺԱՅՐԱԴԱՏԵ ՊԱՏՐԻԱՐք-ԿԱԹՈՒԼԻԿՈՍԻՆ

Ա.ՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տ. Տ. ՄԱՏԹԵՈՍ Բ-ի

Որդիական ամենախոնարհ ակնածութեամբ

նուիրում է

Թարգմանիչը

«ՍԱԿԱՅՆ ԱՐԴ, ՏԻՐՈՁ ՓԱՌՔԸ ՄԵՐ ՄԷՋ,  
ԻԲՐԵՒ ՀԱՅԵԼԻՈՅ ՊԱՐՁ ԿԵՐՊԱՐԱՆՔՈՎ ԱՐՏԱ-  
ՑՈԼԻՈՒՄ է: ԵՒ ՄԵՆՔ ՊԻՏԻ ԿԵՐՊԱՐԱՆԱՓՈԽ-  
ՈՒԵՆՔ ՆՈՅՆ ՊԱՏԿԵՐԻՆ,—ՄԷԿ ՓԱՌՔԻՑ ՄԻՒ-  
ԸԸ, ԻԲՐԵՒ ՏԻՐՈՁԻՑ, ՈՐ ՀՈԳԻ է»,

Բ. Կորնիժ. Գ. զլ. 18.

## ՅԱՌԱՋԱԲԱՆ

Կալիֆորնիայի գրավաճառանոցներից  
մէկում անցեալ աշնան հեղինակը գտաւ  
մի փոքրիկ զբքոյկ, որի ճակատը իւր  
անունն էր կրում. մի զբքոյկ, որի զբքու-  
թեան մասին նա ոչ մի զաղախար չունէր:  
Նա այդ զիրքը ոչ զրել էր և ոչ այն անու-  
նով զրոշմել, որը նա կրում էր: Սակայն  
հեղինակը չկամեցաւ անտես անել իւր  
ուշադրութիւնը յափշտակող այդ զբքոյկը,  
որը ազատ խօսակցութեան մի թեթև  
զրութիւն էր: Զնայած զրքի շատ թերու-  
թիւններին այնու ամենայնիւ հեղինակը  
արժանի համարեց նրան ուշադիր հրա-  
տարակութեան:

Ինչպէս իւր նախընթաց օրինակը,  
սոյն զբքոյկն էլ խօսում է միայն մի ուղ-  
ղութեան մասին, այսինքն մի մեծ առար-  
կայի՝ այն է մարդկայինի մասին: Ըստ  
այսմ էլ լոյսն ու ստուերը բաժանուած

կութիւնը։ Այս, եթէ աշխարհիս վերայ միջոց և ճանապարհ չլինէր այդ իրազործելու, այն ժամանակ աշխարհից աստուածային ամենալաւ պարգև կը խլուէր։ Հենց այդ է, որի համար մարդ ստեղծուել է, ինչպէս Բրոֆինովն է ասում։ «մարդ ստեղծուել է, աճելու և ոչ անշարժութեան մատնուելու»։ Եւ կամ մի հին գրքի խորիմաստ խօսքերի համեմատ։ «որոնց նա առաջ ստեղծեց, կարգադրել է նաև, որ նմանուեն իւր Արդւոյ իսկական պատկերին»։

Քննենք մի քանի մեթոդներ, որոնք մեզ մօտ բարելաւման համար գործ են դրւում։ Այդ մեթոդները ինքն ըստ ինքեան սխալ մեթոդներ չեն և իրանց աեղը կարող են շատ օգուտ բերել։ Մի միայն պարսաւելու համար չեմ առաջ բերում նրանց, ևս ասում եմ միայն, որ նրանք անկատար մեթոդներ են, մի կատարեալ յաջողութիւն ապահովել չեն կարող։

Առաջին անկատար մեթոդն է մի հաստատուն որոշման վերայ յոյս գնելը։ Դատարկ կամքի ոյժի, նոյն իսկ լուրջ գրոհ տալու մէջ ոչ մի փրկութիւն չկայ։ Կոխւ, լարուածութիւն, այն, նոյն իսկ հոգւոյ երկիւլը ունեն իրանց նշանակութիւնը քրիստոնէական կեանքի մէջ, ինչպէս որ յետոյ մենք կըտեսնենք, սակայն այստեղ առաջ բերելը գեռ վաղ է։ Երբ ես, մի քանի տարի առաջ «Էտրուրիա» նաւով ճանապարհորդում էի, Ատլանտիկ Ովկիանոսում մեր նաւը յանկարծ մի անգամից կանգ առաւ։ Մի ինչ որ

մեքենայ խանգարուել էր։ Այդ բովէին աշխատելու ընդունակ հինգ հարիւր մարդ կար նաւի վերայ։ Կը հաւատանք, որ մենք նաւը առաջ շարժել կարող էինք, եթէ կայմի մօտ կանգնէինք և նաւը առաջ մղէինք։ Եթէ մէկն իւր սրբացումն կուռով է ձեռք բերելու ձգտում, նման է նա այն մարդուն, որը կայմը հրելով իւր նաւը ծանծաղուաթից հանել է կամենում, կամ նրան՝ որը ջուրն է ընկել և իւր մազերից բռնելով, իրան ջրից հանել է կամենում։ Նմանօրինակ ջանքն ու աշխատանքը իւր ամբողջ անհաստատութեամբը Քրիստոս հետեւեալ խօսքերով է արտայայտել. «Իսկ այժմ, ով ձեզնից, որքան էլ որ հոգայ կը կարողանայ իւր հասակի վերայ մի կանգումն աւելացնել»։ Ինընավստահութեան մեթոդի, զննեա, մի լաւ կողմն այն է, որ, ով այդ ճանապարհն է բռնում, նրա համար շատ շուտով էլ պարզում է, որ այդ ճանապարհը դէպի նպատակը չէ տանում։

Այլ ճանապարհ է ընտրում նա, որ ասում է. «Իմ եղանակը այլ է. ես նկատել եմ, որ օրն ի բուն լարուած գրութիւնը միայն յիմարութիւն է։ Ճշմարիտն եմ ասում։ Ես ինձ չեմ թուլացնի ընդհանուրի կոռու մէջ, այլ իմ ոյժերս կը հաւաքեմ մի այլ մեղքի դէմ կոռուելու համար։ Այդ մեղքն աչքիս առաջից չհեռացնելով, կաշխատեմ նրան հաստատապէս խաչել. և այսպիսով, յոյս ունեմ կամաց կամաց բոլոր մեղքերս ոչնչացնել»։ Շատ լաւ մտածուած է այս, սակայն

չորս պատճառով չի կարելի այդ իրագործել։ Նախ՝ կեանքը կարձ է, իսկ մեղքերի թիւը մի ամբողջ լեզեօն։ Երկրորդ՝ իրան առանձին մեղքերի հետ կապել, նշանակում է մնացած մեղսակիր յատկութիւնները իրանց կամքին թողնել։ Երրորդ՝ մի միակ մեղքի դէմ մղած կոխւը թողնում է հիւանդութեան բուն արժանան ու աղբիւը անշարժ։ Այդպիսով մեղքի մի հոսանքի միայն առաջը կառնուի, մինչդեռ փորձը մեղուսուցանում է բնական հանգամանքների հեղեղումն մի այլ կողմից։ Բարոյականութեան կաթ կաթ ծծուելուն համարեա միշտ հետևում է զղջումն։ Յետ մղուած ջրերն հաւաքւում են մինչև որ ամբարտակը մի որ և է տեղ պատրում է, և շատ հեշտութեամբ նոյն մարդիկը աւելի չարամիտ են գառնում, քան առաջ էին։ Վերջապէս սրբացումն ոչ թէ ժխտման, այս կամ այն մեղքի ճնշման մէջ է, մեղքի ծիլերը կտրելը շատ հեշտ է, սակայն չար բնոյթը կատարելապէս այդպիսի հատումներով չի բարելաւուի։

Մի երրորդն ասում է. Շատ լաւ, ես իմ մեղքերս կամաց կամաց ոչնչացնելու փորձը թողնում եմ։ Ես կրծքակամ այժմ ընդհակառակն անել։ Առաջս ունենալով մի նախատիսլ պատկեր, ես կաշխատեմ նրա առաքինութիւնները սեպհականացնել։ Այս նմանողութիւն է, որը իւր մէջ պարունակում է կառկածամտութիւնը, իսկ վերջինս նմանողութիւնը մեքենայական է գարձնում։ Մարդու կարող է միշտ իւղական պատճառով բոլորովին ողորմելի քրիստոնեայ լինել, որը միայն մի առաքինութեան է ձգուում և զբա հետ մոռանում, որ իւր միակողմանի զգաստութիւնը իրան աւելի վատ մարդ է գարձնում, քան լաւ։ Սրանք ինքն ըստ ինքեան գեղեցիկ առաքինութեանց օրինակներ են, որոնք վատ յատկութեանց հետմիաւորուելով, կորցնում են իրանց նշանակութիւնը, արժէքը։ Բնաւորութիւնը մի համախումը բան է, բոլոր առաքինութիւնները պէտք է միշտ միանց հետ առաջ գնան և մարդկային կատարեալ հասակին հասնեն։ Թէկ այս տեսակ սրբացումն ունի մի արդար նպատակ իւր առաջ, բայց որորովինետեւ առանձին առանձին մերժուում է նա,

իւղանկարից, արհեստական ծաղիկը բնականից զանազանել։ Առաքինի յատկութիւններ հետզհետէ իւրացնելը իսկական մաքով նոյն հետևանքն ունի, ինչ որ մեղքը հետզհետէ արմտախիլ անելը։ Իսկ սրա ժամանակաւոր արդիւնքն է անհամաչափ, հաւասարակշռութիւնից զուրկ բնաւորութիւնը։ Այդպիսի բնաւորութիւնը մէկը իւր երևակայութեամբը անուանել է. «Իւր մեծութեան համար չափազանց բուծուած արարած»։ Կան քրիստոնեաներ, որոնք մի կողմից չափազանց բուծուած են, միւս կողմից չքաւոր և խղճալի են։ Եթէ մէկն, օրինակ, հեղ ձևանալով, մէկ ուրիշի աշխարհային կեանքն է խլում, այդպարզ այլանդակութեան արդիւնք է։ Նոյնպէսմի բարեմիտ և զգաստութեան հետևող մարդկարող է միենոյն պատճառով բոլորովին ողորմելի քրիստոնեայ լինել, որը միայն մի առաքինութեան է ձգուում և զբա հետ մոռանում, որ իւր միակողմանի զգաստութիւնը իրան աւելի վատ մարդ է գարձնում, քան լաւ։ Սրանք ինքն ըստ ինքեան գեղեցիկ առաքինութեանց օրինակներ են, որոնք վատ յատկութեանց հետմիաւորուելով, կորցնում են իրանց նշանակութիւնը, արժէքը։ Բնաւորութիւնը մի համախումը բան է, բոլոր առաքինութիւնները պէտք է միշտ միանց հետ առաջ գնան և մարդկային կատարեալ հասակին հասնեն։ Թէկ այս տեսակ սրբացումն ունի մի արդար նպատակ իւր առաջ, բայց որորովինետեւ առանձին առանձին մերժուում է նա,

այդ պատճառով էլ նպատակին չի հասնում։  
Մի չորրորդ միջոց ևս կայ, որ հազիւ յիշելու  
արժանի է, որովհետև նա վերև յիշած միջոց-  
ների մի այլ ձևն է, —այդ երիտասարդութեան  
մեթողն է։ Վերցնում են մի օրատետր, խորա-  
գրերով իւրաքանչիւր օրուայ համար, և մի ցու-  
ցակ առաքինութիւնների, որոնց դիմաց մարդ  
բազմանշանակ գծեր և խաչեր է քաշում։ Այդ  
օրատետրը պահւում է մի ծածուկ տեղ, և եր-  
բեմն երբեմն, երեկոյեան խաղաղ ժամերին բա-  
րեխոճօրէն մարդ իրան դատի է ենթարկում։  
Օրագրով վարած կեանքը ֆրանկինի մեթողն  
էր, և ևս հաւատում եմ, հազարաւորները կարող  
են ասել, որ այդ մեթողը, այնտեղ՝ ուր ոչ ոք  
չէր տեսնում, գեղեցիկ կանոնների մի ժողովա-  
ծու ունէր, որ մարդիկ լուրջ ժամանակ գրի էին  
առել, սրանց համեմատ իրանց կեանքը վարելու  
համար։ Ի հարկէ, բարի կամքը շատ գովելի է,  
միայն արդիւնքը շատ չնշին է։ Ինքներդ ասացէք,  
արդեօք չնշին չէ։ Եւ հաստատուն փաստերով կա-  
րող ենք ասել — այդպէս է հէնց նրա համար,  
որովհետև մի գեղեցիկ օր այդ լաւ կանոնները  
մենք մոռացած ենք լինում։

Վերոյիշեալ չորս մեթողները — ինքնավստա-  
հութեան, անձնաճնշման, նմանողութեան և օրա-  
տետրի — բոլորը մարդկային, բոլորովին բնական,  
սակայն անհասկանալի և ինչպէս որ կան՝ ան-  
բաւարար են։ Ես չեմ պնդում, կրկնում եմ  
գարձեալ, որ դրանք անպէտք են. անստոյգու-

թիւնը աւելի նրա մէջ է, որ նրանք ներգործող  
մեթողների ուշադրութիւնը մի կողմն են թող-  
նում և մի չափաւոր բարի արդիւնք աչքի առաջ  
ունենալով, զոհում են կատարեալ յաջողութիւնը։  
Իսկ թէ որոնք են ճիշտ մեթողները, կը քննենք  
ստորև։



### Սրբագործման նախադուռն

Կայ արդեօք մի կանոն, մի գրութիւն սրբա-  
գործման համար, — կարո՞ղ է մարդ այդ մեծ կեր-  
պարանափոխութեան մասին լուրջ կերպով խօ-  
սել, որպէս թէ խօսքը մի որոշ արկածի՝ ելէկ-  
տրական ոյժերի մի արգասիքի մասին է։ Ան-  
կասկած։ Պէտք է արդեօք մեքենայական փորձի  
անսխալ յաջողուելը և մարդկային կեանքը պայ-  
մանաւորող փորձը պատահականութեան վերա-  
գրել։ Միթէ սերմն աճում է որ և է օրէնքի հի-  
ման վերայ, իսկ մարդկային բնաւորութիւնը պա-  
տահականութեան քմահաճութեամբ։ Եթէ մենք  
ամենայն խղճով չընդունենք և չհաւատանք, որ  
կրօնի ոյժերը իրենց գործն են կատարում, այն  
ժամանակ կրօնը ոչ մի նշանակութիւն չի ունե-  
նայ, և եթէ այդ ոյժերի օրէնքը պարզ խօսքե-  
րով բացատրել անկարելի է, այն ժամանակ քրիս-  
տոնէութիւնը ոչ թէ կրօնի, այլ հանելուկի աշ-  
խարհ կլինի։

Բայց մրտեղ ենք գանում վասահելի մի ձեւ  
կամ գրութիւն այդ առթիւ: — Այստեղ, ուր մենք  
իւրաքանչիւր մի գիտական ձև ենք փնտրում — այն  
է՝ պատշաճաւոր ուսումնական զրքերում: Եւ եթէ  
մենք, քրիստոնէական դասազրքերին դառնանք,  
մեր հարցի համար մի գրութիւն կը գտնենք, այն-  
քան պարզ ու հասկանալի, ինչպէս կարող է լինել  
միայն մեքենայական գիտութեանց որ և է մի կա-  
նոնը: Եթէ այս պարզ գրութեանը աներկիւղ հե-  
տեւի մարդ, արդիւնքը — կատարեալ բնաւորու-  
թիւնը, — այնպէս լաւ ապահովուած կը լինի, ինչ-  
պէս մի արդիւնք, որը բնական օրէնքներին  
ենթակայ է: Այն կանոնը, որի համար խօսւում  
է, երբէք ոչ ո. Գրքում, և ոչ իսկ գրականու-  
թեան մէջ, այնպիսի ազնիւ արտայայտութիւն չէ  
գտել, քան Պօղոս առաքեալի կարճ, բայց բազ-  
մարովանդակ խօսքերի մէջ: Այդ խօսքերը զըտ-  
նուում են Կորնթացւոց համայնքին գրած Բ.-րդ  
թղթի մէջ, որը ապականուած և բարոյականու-  
թիւնից գուրկի, առակ դարձած մի քաղաքում  
ապրող և երկնային կեանքը փնտրող քրիստոնեայ  
մի համայնքի է ուղղուած: Ահա այդ խօսքերը.  
«Սակայն արդ, Տիրոջ փառքը մեր մէջ, իրան  
հայեցայ՝ պարզ կերպարանով արտացոլում է,  
եւ մենք միենայն պատկերին պիտի կերպարա-  
նափոխուեաք, մեկ փառքից միւսը, իրան Տիրո-  
ջից, որ չողի է» (Բ. Կորնթ. Գ. գլ. 18):

Ուշադրութիւն դարձէք այստեղ հէնց սկըզ-  
բից մինչև այժմ մեր բոլոր մեթովների և լար-

ուածութեան բոլորովին հակապատկերի՝ կրաւո-  
րական ըմբռնման վերայ, — մենք պէտք է կեր-  
պարան ափոխուենք, բայց մենք չենք մեզ  
կերպարանափոխողը: Ոչ մի մարդ չի կարող  
իրեն աւելի լաւ կեանքի փոխել: Եթէ նոր կտա-  
կարանում այդպիսի ներքին և հոգեսոր կերպա-  
րանափոխութեան օրինակների մասին խօսւում է,  
այդ պատահում է կրաւորական արտայայտու-  
թեամբ: Մենք կտեսնենք շուտով, որ սա իւր  
հաստատ հիմքն ունի: Մինչդեռ այդ խօսքերի  
վերայ չպէտք է զարմանանք, որպէս թէ նրանց  
կրաւորական ըմբռնման լարուածութիւնը, մեր  
ամբողջ գործունէութեանը բացասում է, կամ  
մի հասկանալի օրէնքից տեղեկութիւն չունի: Ինչ  
որ հոգեսոր համար այստեղ պահանջւում է, ըսդ-  
հանրապէս վերաբերում է և մարմնին: Մարմնի ա-  
ճեցման դէպքերը բնախօսական տեսակէտից կրա-  
ւորական բայերով են արտայայտում: Աճեցումը  
կամքից կախում չունի. տեղի է ունենում նա, կա-  
տարւում է, և յառաջ է գալիս գործարանների մէջ:  
Եւ այստեղ այն խօսքը թէ «Թուք պէտք է նո-  
րից ծնոււէք» — մենք ինքներս չենք կարող  
ծնուել, «մինչև որ Քրիստոս ձեր մէջ պատկե-  
րանայ», — մեր մէջ կերպարանք ուտանայ-  
սում է մի այլ խօսք: Իսկ նոր մարդու համար  
ասուած է, «որ նորոգւում է այն նախատիպ-  
պատկերի համեմատ, որը նրան ստեղծել է»:  
Սրանից և նմանօրինակ տեղերից պարզ է, որ  
մեր մէջ գործում է կերպարանափոխուած մի



ներշնչումն, ինքներս մենք չենք նորոգւում: Ի՞նչ-  
պէս որ այն, ինչ որ ջերմաշափի մէջ փոփոխու-  
թիւն է առաջ բերում—նրանից դուրս է գտնւում,  
ճիշտ այդպէս էլ մարդու հոգուց դուրս կայ մի  
բան, որ նրա ներսը կերպարանափոխութիւն է  
առաջ բերում: Որ մարդը այդ ներշնչման հա-  
մար զգայուն է, որ նեշնչումն նրա վերայ, իբրև  
մի կազմագուրկ իրի վերայ, կատարուել չի կա-  
րող, որ մարդ իրեն նրան աւելի շատ կընուիրի  
—ինքն ըստ ինքեան հասկանալի է: Սակայն նոյն-  
չափ ճշմարիտ է, որ ոչ նրա կարողութիւնը և ոչ  
նրա կամքը կերպարանափոխութիւն առաջ բերել  
կարող են:

Որքան էլ որ այս պարզ ու հասկանալի է  
թւում, այնուամենայնիւ շատերի համար այդ  
յուղիչ մի գիւտ կըլինէր: Այն փոփոխութիւնը,  
որի համար հոգում ենք, ոչ մի ջանքով ձեռք  
չի բերում: Նա պէտք է մեր մէջ կատարուի  
մեզանից դուրս եղող մի Արարչի ձեռքով: Ի՞նչ-  
պէս որ ծիլը աճում է դէպի վեր, ինչպէս որ  
արտաքին ազգեցութեան պահանջով ոյժի տակ  
ծաղիկը բացւում է և պտուղը կարմրում, այս-  
պէս էլ աճում է մարդը նոր կեանքի մէջ, նրա  
վերայ անտեսանելի կերպով յեղյեղւող ոյժերի  
ներգործութեան տակ:

Սրբագործան մինչև այժմ մեր ցոյց տուած  
ձգտման հիմնական սխալը նրա մէջ է, որ մենք  
կամենում ենք ներքուստ վերածնել այն, ինչ որ  
արտաքուստ միայն կարող է լինել: Շարժողու-

թեան առաջին օրէնքից յետոյ իւրաքանչիւր մար-  
մին մնում է հանգիստ դրութեան մէջ, և կամ  
համաձև շարժումներից յետոյ՝ անշարժ դրու-  
թեան մէջ, մինչև որ ներգործող ոյժ ոյժե-  
րի մի այլ հոսանքով այդ դրութիւնը  
չի փոխուի: Այսպէս է հնչում նաև քրիստոնէու-  
թեան առաջին օրէնքը: Մի մարդու բնաւորու-  
թիւն մնում է այն դրութեան մէջ, ինչպէս որ  
նա կայ և կամ զարգանում է այն ուղղութեամբ,  
որը մինչև այդ ժամանակ ունեցել է, մինչև որ  
ներգործող ոյժ ոյժերի մի նոր հոսանք  
պատճառ կըլինի այդ ուղղութիւնը կամ դրու-  
թիւնը փոխուելուն: Մենք մնացել ենք մինչև  
այժմ հին դրութեան մէջ, որովհետեւ մենք մեզ  
նոր «ներգործող ոյժերի» չենք յանձնել: Ահա  
ձեզ կաւ և ահա ձեզ բրուտ, մինչև այժմ մենք  
մեր յոյսը կաւի վերայ էինք դրել կաւը պատ-  
կերացնելու համար:

Սակայն որտեղից են ծագում ներգործող  
ոյժերը և ով է բրուտը: Դրա պատասխանը մենք  
գտնում ենք մեր օրինակի մէջ: «Տիրոջ փառքն  
արտացոլում է մեր մէջ պարզ կերպարանքով,  
և մենք պէտք է կերպարանափոխուենք նոյն  
պատկերին»: Մի քիչ բացատրութեան կարիք  
ունի այս: Ի՞նչ է «Տիրոջ փառքը»: Ի՞նչպէս  
կարող է մահկանացու մի մարդ այն արտացոլել,  
ի՞նչպէս կարող է նա «ներգործող ոյժ» լինել,  
մարդու մէջ կատարեալ պատկեր ստեղծել:  
«Փառք» խօսքի մէջ—և այս խօսքն է «յորդահոս

ոյժերի» բացարձակ նեցուկը—հասկացւում է առհասարակ Բարձրեալի գաղափարը, գերերկրային փայլը, Աստուծոյ փառաց լուսափայլ գաղափարը: Այդ է Տիրոջ փառքը, որը Մովսէսը տեսնել ցանկացաւ, և որը թէկ նա տեսնել չկարողացաւ, բայց իւր սեպհական պատկերով արտացոլեց, երբ նա Աստուծոյ հետ խօսելուց յետոյ կրկին վերադարձաւ մարդկանց մօտ: Այդ է ներքին էակի ճառագյթումն: Հին նկարիչներն այդ արտայայտում էին՝ «Փրկչին լուսաճաճանչ ճառագյթներով շրջապատելով: Խորհրդանշանը տեսանելի է, սակայն ի՞նչն է անտեսանելի: Ի՞նչ է արտացոլուածը: Այդ բնաւորութիւնն է:

Տիրոջ փառքն է Աստուծոյ պայծառ բնաւորութիւնը: Երկրի վերայ կամ երկնքում աւելի փառաւոր բան չկայ: Երկիրը «լի է նրա փառքով», որովհետև բոլոր արարածները լի են նրայատկութեամբ: «Աստուծոյ փառքն» է Աստուծոյ բնաւորութիւնը: «Միածին Որդոյ փառքն է մի բնաւորութիւն, որը լի է շնորհով և ձշմարտութեամբ»: Եւ երբ Աստուած իւր ժողովրդին իւր անունն յայտնեց, այդ նշանակում է դրանով նա Ենովայի բնաւորութիւնը պարզապէս յայտնեց, որը հէսց ինքն է: «Աստուած մօտեցաւ Մովսէսին և քարոզում էր նրան Տիրոջ անուան մասին... Տէր, Տէր ողորմած և դժառատ, երկայնամիտ և հաւատարիմ»: Ահա այս է նրա բնաւորութիւնը, նրա փառքը, որ Մովսէսը տեսաւ:

Քրիստոսի փառքը գերերկրային փայլի լոկ մի լուսաճաճանչ չէր, ապա թէ ոչ ի՞նչպէս կարող էր Պօղոսը պահանջել մեղանից այդ արտացոլել: Այդ փառքի պատեանը հեռացնելով, կը մնայ պարզապէս գիղեցիկ Քրիստոսը—բարոյապէս և հոգեպէս կատարեալ մի գիղեցկութիւն, մի անվերջ ներգործող, անվերջ վեմ, անվերջ գիւրահաղորդ, իւր նախատիպ պատկերից միշտ արտացոլող՝ ըմբռնելի հոգի:

Կարդացէք այժմ Պօղոս առաքեալի խօսքերը սոյն բացատրութեամբ, կցեցէք ամենալաւ խելամտութեանը պարզ բացատրութիւններ և կանոնը կասէ. «Պարզ կերպարանքով Քրիստոսի բնաւորութիւնը արտացոլելով, մենք կը կերպարանափոխուենք նոյն պատկերին»,—մի տղեղ բնաւորութիւնից աւելի լաւի, մի լաւ բնաւորութիւնից ևս առաւել լաւի, և այդպէս շարունակ միշտ կը կատարեալագործուենք, «մինչև որ նոյն պատկերը մեր մէջ կերպարանք կառնի»: Սրբագործման ամբողջ մեծ հարցը լուծում է հետեւեալ կարճ նախադասութեամբ, «Այնպիսի դիրք ընդունեցէք Քրիստոսի մօտ, որ ձեր էութիւնը նրա էութիւնն արտացոլէ և գուք կը լինէք նման նրան»:

Բոլոր մարդիկ մի հայելի են, ահա այն օրէնքը, որի վերայ Պօղոս առաքեալը իւր գրութեան մէջ յենւում է: Աւելի ճիշտ կերպով մէկը չի կարող մարդուն նկարագրել, քան նրան չի կարող մարդուն նկարագրել, քան նրան հայելի անուանելը: Երեկ երեկոյեան, երբ մենք

միասին նստած էինք, աշխարհը—որի մէջ մեզանից ամէն մէկը մի ամբողջ օր անց էր կացրել—մեր սենեակում իւր կիզակէտն (Brennpunkt—ֆօկուս) ունէր։ Ինչ որ մենք տեսնում էինք, ոչ թէ այս կամ այն էր, այլ մի բան այլ աշխարհի։ Մենք բոլորս հայելիների մի ժողովածու էինք։ Ինչ որ իւրաքանչիւրը մեզանից օրուայ ընթացքում տեսել էր—արտացոլում էր։ Ամէն մէկիս արկածները տեսանելի էին դառնում, մենք տեսնում ենք մարդկանց, որոնց հետ իւրաքանչիւրը յարաբերութիւն էր ունեցել, այն, մենք լսում էինք նրանց. իւրաքանչիւրի փորձառութիւնները պարզապէս կրկնում էին նրա մէջ, մենք տեսնում էինք թէ մարդկանց և թէ նրանց գործերը նրա մէջ պատկերացած։ Երբ ես իմ հարևանիս հետ խօսում էի, ակամայից թոյլ տուի նրան իմ հայելու մէջ ամէն բան տեսնէ, ես ցոյց տուի նրան, ինչ որ զրա մէջ անց էի կացրել, շատ պատկերներից այս կամ այն, որոնք իրար յետևից երևան էին դալիս, իսկ երբ ես նրան լսեցի, ես ոչ միայն լսող, այլ և տեսնող էի, ես տեսայ նրան իւր հայելոյ մէջ։ Պատկերների մի ամբողջ տեսարան է ներկայացնում մարդկային ամբողջ յարաբերութիւնը։ Ես պատահում եմ երկաթուղու մէջ մի օտարականի։ Հէնց որ նա սկսում է խօսել, արդէն իմանում եմ ես, թէ ի՞նչ մարդ է իմ առաջս կանգնած։ Առանց ցանկանալու նա իւր խօսքերի, իբրև հայելոյ, մէջ արտայատում է իւր հայրենիքը, իւր ծնողներին, իւր ծագման

ամբողջ պատմութիւնը։ Բնախօսական տեսակէտից նա մի հայելի է։ Շուտով նկատում եմ ես նոյնպէս, որ նա շատ հաճոյքով քաղաքական հարցեր էլ է մէջ բերում, և այն եղանակն ու ձեր, ինչպէս որ նա այս կամ այն լրագիրն է անուանում, արտայայտում են նրա քաղաքական հայեցակէտը։ Նրա ընդարձակ խօսքերի մէջ երեսում է անձնական փորձառութեան մի ամբողջ աշխարհ։ Այն գրքերը, որ նա կարդացել է, այն մարդիկը, որոնցով շրջապատուած է եղել այն հանդամանքները, որոնք նրա վերայ ներգործել են և նրան դարձրել այն, ինչ որ նա է—այս բոլորը նրա էութեան մէջ այնպէս էին հաստատուն տեղ բռնել, և այնպէս խոր արմատ ձգել այնպիսի մի բրիչով, որ երբէք չպիտի մոռացուէր, և այնպիսի մի հաստատագիր կազմել, որ երբէք չպիտի ջնջուէր։ Ինչ որ ես նրա մէջ եմ կարդում, նոյն ժամանակ նա էլ իմ մէջ է մինչհ մեր ճանապարհորդութեան կարդում, և մինչհ մեր ճանապարհորդութեան վերջանալը, համարեա թէ կարող ենք մէկս միւսի վերջանալը, մեր սիրաը, յիշողութիւնը, նոյն իսկ հոգին մէջ։ մեր սիրաը, յիշողութիւնը, միւսի մէջ հայելեայ դահլիճ է, որ շարունակ պատմի մեծ հայելեայ դահլիճ է, ու անդարձնում և անդրագարձնում։ Այս կերներ է ընդունում և անդրագարձնում։ Այս զարմանալի կարգաւորութեան և բաշխման վերայ է յենւում մահկանացու մարդկանց Քրիստոսի էութիւնը արտայայտելու կարողութիւնը։ Սակայն այս բոլորը չէ։ Եթէ մեր, այսպէս

ասած, ներքին կեանքի զանազանատեսակ ցուլացումները ուրիշների համար այդքան հեշտ ճանաչելի են և այդպիսի նշանակութիւն ունին, հապա ի՞նչ պիտի ասենք ներգործութեան ոյժի համար, ամբողջ պատմութեան համար, որը մեր հոգւոյ մէջը թաղուած է: Այն աղեցութիւնները, որոնց մենք ենթակայ ենք, լոկ միայն մի ակնթարթի յեղյեղումն չեն, որոնց մեր հայելին մի վայրկեան իւր հարթ մակերեսոյթի վերայ պահելով, յետ է մղում նորից իւր շրջապատի մէջ: Ոչ, նրանք մնում են հոգւոյ մէջ իբրև տպաւորութիւններ, որոնց նա ընդ միշտ պահպանում է:

Իւրացման այս օրէնքն է երկրորդ և անհամեմատ դժուարակշիռ ճշմարտութիւնը, որը Պօղոս առաքեալի որբագործման հիմքն է կազմում,—յատկապէս ճշմարտութիւն, որ մենք մարդիկս ոչ միայն հայելի ենք, մեր առաջ պատահածը ընդունելու և արտացոլելու, այլ որ մենք այս, ըստ երեսյթին, անցողականը մեր ներքին էութեան մէջ ենք ընդունում, որ նա մեր եսի մի մասն է դառնում: Ոչ ոք չգիտէ, թէ ի՞նչպէս է հոգին տպաւորութիւնները պահպանում: Բնութեան ոչ մի փորձառութիւն, քի-միական ոչ մի օրինակ, հոգւոյ վարդապետութեան ոչ մի տող չէ կարող մեզ որ և է նրանանդ տալ, այս զարմանալի ներգործութիւնը քննելու, իմանալու համար: Սակայն պէտք է լաւ հասկանանք, որ պատահած գէպքերը հոգւոյ մէջ ոչ միայն իրենց պատկերներն են թողնում, այլ

բառացի ասած, նրանք նրա մէջ տպաւորում են: Ի՞նչպէս կարող է հոգին անցած-պատահածը արտայայտել, եթէ որ նրանց իւր մէջ պահած չինի: Ինչ որ մարդ իւր շրջապատից մինչև այժմ տեսել, տեղեկացել, ըմբռնել կամ զգացել, հաւատացել է, այժմ նրա մէջ է, մարդս կազմուած է մասամբ այդ բաններից: Ոչ թէ նրանք են մարդու մէջ պատկերներ կազմում, այլ մարդս է նրանց պատկերը: Մարդ կարող է ստել, յուզուելով կարող է իրենից հեռացնել նրանց, բայց այդ իրողութիւնը փոխել չի կարող: Այս տպաւորութիւնները ոչ թէ նրանից կախուած են մնացել, այլ նրա մէջ հաստատուն հիմք են բռնել: Նա նրանց փոխել, նրանցից հրաժարուել չի կարող: Նրանք ոչ միայն նրա յիշողութեան մէջ են, այլ ուղղակի նրա մէջ են: Նրա հոգին այն է, ինչ որ նրան դարձրել են այն տպաւորութիւնները, որոնք նրան իրենց էութեան հետ կատարելութեան են հասցըել և այդպիսով նրանից ստեղծել մի այլ հոգի քան առաջ էր: Այս արկածները, այս պատահարները, այս գրքերը, այս ներգործութիւնները մարդու ընկերներն են ու նրան կերպարանափոխողը: Նրանց ձեռքումն է կեանքը և մահը, գեղեցիկութիւնն ու տգեղութիւնը: Եւ և որ նրանց պատկերը մարդու հոգւոյ վերայ է երբ որ նրանց պատահանալի ուղղակի մի ոյժ արգելել չի կարող, ընկնում, աշխարհի ոչ մի ոյժ արգելել չի կարող, որ մի կողմից նրա մէջ տպաւորուի և միւս կողմից նրա էութիւնից արտացոլուի:

Ահա այս զարմանալի—առեղծուածալից և

սակայն տեսանելի հոգեբանական իրողութեանց վերայ է հիմնում Պօղոս առաքեալը իւր սրբագործման վարդապետութիւնը։ Նա ճանաչում է, որ մարդու բնաւորութիւնը մի դանդաղ կազմակերպուող և, նայեած պատկերներին, որոնք նրա հոգւոյ հայելւոյ վերայ սահում են, իւրաքանչիւր ժամ լաւանալուն և վատանալուն ենթակայ մի պատկեր է։ Մի քայլ ևս առաջ և այս խորհրդածութեան վսեմութիւնն ու անհունութիւնը քրիստոնէութեան զլիսաւոր հարցի նկատմամբ իւր ամբողջ գործադրութեամբ մեր առաջը կլինի։



### Ներգնչման ոյժը

Եթէ հոգւոյ մէջ դէպքերը տպաւորւում, նրան կերպարանափոխում են, որքան ևս առաւել մարդուն են կերպարանափոխում։ Փողոցում ոչ ոք չի կարող միւսին պատահել, առանց նրա վերայ մի տպաւորութիւն թողնելու։ Մենք խօսում ենք, մենք միմեանց հետ մի երկու խօսք ենք փոխարինում, և ինչ որ փոխարինում ենք—մեր հոգին է։ Եւ որտեղ մի երկու անձնաւորութեան մէջ մի շատ ներքին և յաճախ յարաբերութիւն է տեղի ունենում, այս փոխարինութիւնը այնքան կատարեալ է լինում, որ մի հոգւոյ բնաւորութեան յատկանիշերը կամաց—

կամաց անցնում են միւսին։ Իսկ միւս հոգին կըլինի նմանօրինակ և աճող յարաբերութիւններովը առաջինին պարտական։ Ո՞վ արդեօք հոգւոյ այս խորհրդաւոր մերձեցումն չէ նկատել։ Ո՞վ արդեօք որ և է տեղ մի պատուարժան զոյտ չէ ճանաչում, որ ձեռք ձեռքի տուած կատարեալ վստահութեամբ, և այնպիսի սիրալիք բարեհաճութեամբ են կեանքի ճանապարհով առաջգնում, որ վերջը նրանց զիմագծերը նոյն իսկ իրար նման չլինէին։ Նրանք ոչ թէ երկու—այլ մի մարմին են։ Միենոյն է, թէ մարդ որին կուզդէ իւր խօսքը։ Երկուակի համար էլ մարդ միենոյն խօսքերն ունելը. միենոյն է թէ նրանցից ո՞րն էր պատասխանում, որովհետեւ երկումն էլ միենոյն կարծիքին են։ Համարեա կէս դար շարունակ երկուստեք արտացոլել են միմեանց, նրանք միենոյն պատկերին են կերպարանափոխուել։ Ներջնչման մի օրէնք կայ, որի հիման վերայ մենք նմանւում ենք նրան, որին մենք մենք նման ու յարգում ենք, և այսպէս, կան շարունակ յարգում ենք, և այսպէս, կան մարդիկ, որոնք հէնց այն պատճառով են իրար նման, որովհետեւ երկար ժամանակ սիրով կապահանութեան, պւած են եղել։ Գրականութեան, պատմութեան, կենսագրութեան մէջ այդ օրէնքը առաջնակարգ տեղ ունի։ Բոլոր մարդիկ իրենց հարեանների տեղ ունի։ Բոլոր մարդիկ իրենց հարեանների մողարիկ պատկերներն են։ Դաւիթը յիշում է մողարիկ պատկերներն են։ Վիկտոր Հիւնականաթիւն և վերջինս Դաւթին։ Վիկտոր Հիւնականաթիւն այնքան կատարեալ է լինում, որ մի հոգւոյ բնաւորութեան յատկանիշերը կամաց—

Հոգւոյ կերպարանսափոխութիւնը իրական միքան է։ Գէորդ կլիօտի պատգամը աշխարհին այն էր, որ մի բնաւորութիւն ծնում է միւսին։ Ահա միայն այս է ընտանիքի—մարդկային ցեղի որրանի—նշանակութիւնը։ Այս, մարդկային ընկերութիւնները նոյն իսկ այս հզօր ոյժերի ժողովարաննեն, որոնք հոգի են կազմում ու կերպարանափոխում։ Մի խօսքով ներշնչման վարդապետութեան վերայէ հաստատուած մարդկութեան ամբողջ կոթողը։

Բայց Պօղոս առաքեալին էր վերապահուած ներշնչման օրէնքը գերազանց կերպով հասկանալու և գործ դնելու։ Այդ հետևանք էր մի անհամեմատ անվեներութեան, սակայն նա ոչ մի վայրկեան չյապաղեց։ Նա ինքը մի նոր մարդ էր արդէն։ Նա շատ լաւ գիտէր թէ այդ ինչպէս պատահեց—այդ Քրիստոսն էր։ Դամասկոսի ճանապարհին պատահեց նրան Քրիստոս և նոյն ժամից սկսած էր կեանքն ընկղմուեց Քրիստոսի կեանքի մէջ։ Թէ խօսքի, թէ դործի, թէ ամբողջ կեանքի, սիրոյ և հաւատի մէջ Քրիստոսի ներգործութիւնից խուսափել չէր կարելի։ Դրանց վերայ «հոսող ոյժերը» իրանց վճռական զործն արին։ Պօղոսը դարձաւ նման նրան, որին նա երկար սիրել էր. «Մենք բոլոր», իրաւունք ունի նա գրելու, «Ճիրոջ փառքը պարզ կերպով արտացուելով, պիտի կերպարանափոխուենք նոյն պատկերին»։

Ի՞նչպէս պարզ է այս բոլորը, ի՞նչպէս հաս-

կանալի, ի՞նչպէս բնական, ի՞նչպէս գերբնական։ Այն, առօրեայ փորձառութեան համապատասխանող մի օրինակ է այս Եւ, որովհետեւ, ինչ որ ենք, մեր շրջապատի ներգործութեան շնորհիւ ենք, ուստի սրանից հետևում է, որ ով Բարձրեալի ներգործութեան տակ է գալիս, Բարձրեալի պատկերն է,—մի նոր մարդ կլինի նաև կան մարդիկ, որոնց ներկայութեան շնորհիւ մեր լաւը գնահատութեան է արժանանում։ Նրանց ընկերութեան մէջ, ստոր մաքերն ու անպարկեցաւ խօսքերը մեզանից հեռու են մնում։ Նրանց լոկ ներկայութիւնը մեզ բարձրացնում է, մեզ մաքրում է, մեզ սրբացնում է։ Նրանց ազգեցութիւնը առաջ է բերում մեր բնաւորութեան ամենալաւ կողմերը և մեր հոգւոյ մէջ հնչում է մի երաժշտութիւն, որը նրան առաջ բոլորովին օտար էր։

Ենթադրենք այսպիսի ներգործութիւնը շարունակուեց անընդհատ, մի ամիս, մի տարի, մեր ամբողջ կեանքի ընթացքում, մեր կեանքից ի՞նչ չէր կարող նա ստեղծել։ Եւ այսպէս, ուրեմն, մեր ամենօրեայ գոյութեան հողի վերայ կան մեր ամենօրեայ գոյութեան հողի վերայ կան մեր ամբիսի ներգործութիւններ, որոնք մեզ հետ դատում, կշռում են, մեզ հետ շրջում են, և մեր հոգին սրբագործում։ Արդէն մեղաւոր մարդկանց մէջ կան այնպիսիք, որոնց մէջ երկնային մի այն այնպիսիք, որոնց մէջ երկնային մի այստեղ կամ այստեղ կամ ոյժեր, որոնք ժամանական կայ. այստեղ կամ ոյժեր, որոնք ժամանակաւոր միջոցների շնորհիւ Աստուծուց գալիք կաւոր միջոցների շնորհիւ Աստուծուց գալիք նորոգման սանդուխքն են։ Իսկ երբ, մարդուա-

յարաբերութիւնը, որի մէջ Բարձրեալի ոյժի մի փոքրիկ մասն կոյութիւն ունի, ուրիշներին առաջնորդել և բարելաւել կարող է, ինչպիսի սահման կարող է լինել Քրիստոսի ներգործութեան համար: Սոկրատէսի հետ ապրողը—պարզ կերպարանքով իմաստուն պիտի դառնայ, Արիստոտելի հետ ապրողը—արդար: Ասիզ քաղաքացի Ֆրանցը ողորմութեան մէջ է կրթում, Սավոնարուան - ոյժի մէջ: Քրիստոսի հետ ապրողը, պէտք է Քրիստոսի նման լինի, այսինքն ճշմարիտ քրիստոնեայ դառնայ:

Եւ իսկապէս Քրիստոսի հետ ապրելը հէնց այդ արդիւնքն է տալիս: Պօղոսն էլ հէնց դրա մասին է խօսում: Իսկ Քրիստոսի ժամանակ միենոյն արդիւնքն երկաց աւելի աչքի ընկնող եղանակով: Մի զոյդ անմեղ մարդիկ, առանց հոգեկան որ և է ընդունակութիւնների, ոչ պակաս քան երկնայինի գաղափարով լի, ընդունւում են աշակերտների փոքրիկ շրջանի մէջ: Նրանք բարեկամ էին անուանւում: Նրանք սկսեցին անմիջապէս այլ մարդիկ դառնալ: Համարեա օրէ ցօր կարող ենք աշակերտների մեծանալը—փոխուիլը տեսնել: Քրիստոսի էութեան ամենաթեթև ստուելը նրանց մէջ նկատելի է, և ինչպէս պատահաբար, նրանք գործում և ասում են մի բան, որը նրանք գործել և ասել չեին կարող, եթէ նրա հետ ապրած չլինէին: Կամաց կամաց թափանցում է նրանց մէջ Քրիստոսի կեանքի հմայքը, զմայլեցումն: Քայլ առ քայլ գրաւում է նա:

Նրանց, նրանք սթափւում են, նրանք բացւում են, նրանք սրբւում են: Նրանց գէմքը քաղցրանում, բարեկամական է դառնում ուրիշների նկատմամբ, իսկ կեանքը անաչառ: Ինչպէս ծիծեռնակները ամառը և փետացած ծառապտուկները գարնան արեգակի տակ, այդպէս էլ նրանց խեղճ բնութիւնը աճում է աւելի ճոխ կեանքի համար: Նրանք իրենք չգիտեն, իսկապէս, թէ ինչպէս ուրիշ մարդիկ են դարձել: Եւ մի օր նրանք էլ շրջում են այնպէս, ինչպէս իրենց ուսուցիչը և բարիք գործում ինչպէս նա: Նրանք իսկապէս չգիտեն թէ ինչու, բայց և այլ կերպ գործել չեն կարող: Ոչ ոք նրանց չէ պատուիրել. նրանք լսում են ներքին մի մղման. իսկ մարդիկ, որոնք նրանց գիտում են, շատ լաւ գիտեն, թէ ինչպէս է եղել—«Նրանք Տիրոջ մօտ էին»—ասում են միմեանց: Շատ շուտով Տիրոջ էութեան նշանները երկում են նրանց վերայ—«Նրանք Տիրոջ մօտ են եղել»: Ո՞վ զարմանալի, չքնաղ հրաշք, որով ձկնորսները այլ կերպ Քրիստոսին յիշել կարող են: Ո՞վ զարմանալի յաղթութիւն և գաղանիք նորոգման, որ մահկանացում մարդկանց Աստուծոյ պատկերին նման ես դարձում:

Այն ձեփ ու եղանակի մէջ, որով աշակերտները—առանձնապէս Յովհաննէսի աշակերտները—Քրիստոսի ներգործման ոյժի մասին խօսում են, համարեա նրա մէջ մի սրտառուչ բան կայ կարծէք: Յովհաննէսն ինքն ապրում էր նրա հետ

օր աւուր մի գերբնական զարդացման մէջ։ Նա  
յաղթուել էր նրանից խորին յարդանքի, զմայ-  
լեցման և ոգեստութեան մէջ։ Նրա համար մի-  
անգամայն անընմըսնելի էր, որ մէկը այս աղ-  
դեցութեան տակ լինէր և դարձեալ հին մարդը  
մալ կարնահար։ «Ով նրա մէջ կմնայ, նա մեղք  
չի գործիլ», ասում էր նա։ Նրա համար միենոյն  
ժամանակ անհասկանալի էր այդպիսի մէկի մեղք  
գործելը, ինչպէս արեգակի կիզող ճառագայթ-  
ների տակ սառոցի անհալ մնալը և կամ կէս  
օրին խաւարի պատելը։ Եթէ մէկը մեղք էր գոր-  
ծում, Յովհաննէսի համար այդ մի լաւ ապացոյց  
էր, որ նա Քրիստոսի ընկերութեան մէջ չէր  
ընդունուած։ «Ով այնտեղ մեղք է գործում, նա  
Քրիստոսին ոչ տեսել է, և ոչ ճանաչում է»։  
Մեղքը լոռում էր նրա ներկայութեամբ և նրա  
արմատները չորանում էին։ Նրա ոյժը, նրա  
յաղթութիւնը ընդմիշտ ոչնչացած էր։

Բայց կարող է մէկն տեսել, այս, այդպէս էր  
նրա աշակերտների համար և սրանց համար հեշտ  
էր նրա ներգործութեանը անձնատուր լինել,  
որովհետեւ ամեն օր վաղ առաւօտից սկսած մինչեւ  
երեկոյ նրա մօտ էին։ Սակայն, մենք ի՞նչպէս  
կարող ենք արտացոլել այն, ինչ որ չենք տեսել։  
Ի՞նչպէս կարող է լոկ նրա մասին ունեցած յի-  
շողութեամբ այսպիսի զարմանալի հետեանք  
առաջ գալ—մեղ հասած նրա կենաց պատկերի  
պակասաւոր գծագրութեան շնորհիւ, մի մարդու  
չնորհիւ, որ մեղանից 19 դար առաջ ապրել և

ապա երկիրս թողել է։ Ի՞նչպէս կարող ենք մենք  
19-րդ դարի մարդիկս, Քրիստոսին, որ բացա-  
կայ է, մեր ամենօրեայ առաջնորդը դարձնել։  
Սրա պատասխանն է. ամէն բարեկամութիւն մի  
հոգեսր գործ է, նա նիւթի, տարածութեան և  
ժամանակի հետ ոչ մի կապ կամ գործ չունի։  
Ինչ որ ես իմ բարեկամիս մէջ սիրում եմ, այն  
չէ, ինչ որ տեսնում եմ։ Ինչ որ իմ վերայ ներ-  
գործում է՝ նրա մարմինը չէ, այլ նրա հոգին։  
Անպատմելի մի փորձ կլինէր, իսկապէս, այն ժա-  
մանակ ապրած լինելու, ուր մեզ հետեւեալ երգն  
է առաջնորդում։

«Անդադար պիսի կարդամ ես  
Աստուածաշունչ Ս. Գրքի մէջ,  
Թէ որպէս Տէրը եղել է բարի,  
Աննենդ ու անխարդախ։

Մանուկներին ի՞նչպէս նա կանչում,  
Սիրավիր կերպով նրանց էր նայում,  
Եւ վերցնելով բագուլների վերայ  
նրանց գգուանքով սրտին էր սեղմում»։

Եւ սակայն եթէ Քրիստոս մեր օրերում  
երկրի վերայ կը կին անգամ երեար, մեղանից  
շատ քչերն արժանի կլինէին նրան տեսնելու։  
Մի որ և է երկրի միլիօնաւոր հպատակներն իրենց  
թագաւորին երբէք չեն տեսել։ Նոյնպէս էլ Քրիս-  
տոսի միլիօնաւոր երկրագուները նրա հետ  
գոնէ մի անգամ խօսելու բաղդ չէին ունենայ,  
եթէ նա երկրիս վերայ կը կին անգամ երեար։

Մեր յարաբերութիւնը Նրա հետ ճիշտ այնպէս է, ինչպէս ամենաձշմարիտ յարաբերութիւնը մի հոգևոր ընկերութեան։ Ամէն մի բարեկամութիւն, ոէր՝ թէ մարդկային և թէ աստուածային—մաքուր հոգևոր մի յատկութիւն է։ Քրիստոսի յարաբերութիւնից յետոյ միայն Նրա ներգործութիւնը ամենազօրեղ կերպով աշակերտների վերայ արտայայտուեց։ Նրա հետ տեսանելի կերպով մեր յարաբերութիւն չունենալը ոչ մի արգելք չէ կարող լինել, եթէ մենք այժմ հոգանք Նրա էութիւնն արտացոլելու։

Մի երիտասարդ աղջիկ կար, որի սիրալիք բնութիւնը իրեն ճանաչողներին զարմացնում էր։ Նա կրում էր իւր կրծքի վերայ մի մեղալիօն, որը բաց անելու ոչ ոք իրաւունք չունէր։ Միայն մի անգամ, խորին հաւատարմութեան մի բոպէում, թոյլ տուեց ընկերուհիներից մէկին իւր գաղտնիքն իմանալու։ Մեղալիօնի մէջ կար մի թղթիկ, որի վերայ գրուած էր. «Որին ես չեմ տեսել, եւ սակայն սիրում եմ։ Ահա այդ էր նրա գեղեցիկ կեանքի գաղտնիքը։ Նա կերպարանափոխուել էր «Առյա պատկերին»։»

Այս ոչ թէ նմանողութիւն է, այլ աւելի մեծ բան։ Ուշագրութիւն դարձրէք այդ տարբերութեան վերայ։ Տարբերութիւնը՝ թէ իրողութեան և թէ հետևանքի մէջ կարող է այնպէս մեծ լինել, ինչպէս երկու լուսանկարների մէջ, որոնցից մէկը արեգակի ապահոված հաստատուն մի կէտ է, և միւսը—երեխայի գրչի մի անկա-

նոն պատկեր։ Նմանողութիւնը մեքենայական է, արտացոլելը գործարանաւոր է։ Նա պատահականութեան գործ է, իսկ այս սովորութեան։ Մի դէպքում մարդ մօտենում է Աստուծուն և աշխատում է նմանուել Նրան, միւս դէպքում Աստուած ինքն է գալիս մարդու մօտ և Նրա մէջ իւր պատկերը տպաւորում։ Անպայման Քրիստոսի հետևողների մէջ կայ մի նմանողութիւն, որն ոչ այլ ինչ է եթէ ոչ Նրան արտացոլելը։ Սակայն՝ գուրս ձգելով կեղծ հասկացողութիւնները, Պօղոսի խօսքերը ներփակում են այն բոլորը, ինչ որ կարելի է ասել այդ տեսակ հետևողների համար։ «Ամենօրեայ ծանօթութիւն հաստատեցէք Քրիստոսի հետ»—այս է Պօղոսի խօսքերի խսկական միտքը։ Ապրեցէք աւելի Նրա, քան ուրիշի ազգեցութեան տակ։ Մի տասն ըսպէ, որ գուք իւրաքանչիւր օր Նրա ընկերութեան մէջ կ'անցնէք, այս, նոյն իսկ երկու ըսպէ, երես առ երես, սիրա սրտի հետ—ձեր ամբողջ օրուան ուրիշ պատկեր կտայ։ Իւրաքանչիւր մարդ մի ներքին մղանակ ունի, թող Քրիստոս լինի ձեր ներքին մղանակը։ Իւրաքանչիւր գործ իւր հիմնական գիծն ունի, թող Քրիստոս տայ այդ գծի ուղղութիւնը։ Երեկոյեան գու մի նամակ ստացար, որը քեզ տիրեցրեց։ Դու նստեցիր և մի այնպիսի պատասխան գրեցիր, որից համարեա թուղթն այլուում էր։ Դու ժողովեցիր վիրաւորուած զգացմունքներդ, որոնք քեզ էին ենթակայ և գու նամակը փոստին յանձնեցիր,

առանց մի որ և է գութի նամակդ ընդունողի  
նկատմամբ։ Այդ մի անողորմ նամակ էր, և գու  
գրեցիր, որովհետեւ քո կեանքդ դառնացած էր։  
Դու օքը սկսել ես մի այնպիսի հայելիով, որը  
հակառակ կողմից էր կախուած։ Լաւ նայիր, որ  
առաւոտեան ուղիղ կախուած լինի, դէպի Նրան  
դարձած, այն ժամանակ հայելին քո թշնամուդ  
դէմ անգամ մի ուրախ պատկեր կարտացուէ։  
Ինչ որ այժմ դու անել կարող ես, մի օր կըզբա-  
նես, որ դու այդ անել չես կարող, և դու մի  
այդպիսի նամակ գրել չես կարող։ Քո առաջին  
շարժումները գուցէ կլինին միենոյնը. դու գուցէ  
դատում ես ուղղակի այնպէս, ինչպէս երեկ,  
սակայն կոշտ կոպիտ խօսքեր գրչիդ տակից այլ  
ևս գուրս չեն գալիս, և դու կանգնում ես տե-  
ղիցդ, իբրև մի մարդ, որ իրեն արդար չէ գտնում  
և այդ պատճառով աւելի լաւ, — որովհետեւ Քրիս-  
տոսին նման ես դարձել։ Ամբողջ օրուայ ընթաց-  
քում գործածդ նոյն խակ ամենափոքր գործի  
վերայ գտնուում է այն ըոպէի օրնութիւնը, երբ  
դու արշալոյսի բացուելուն պէս Տիրոջը տեսար-  
երեկ դու միայն քեզ համար էիր մտածում։  
Այսօր տեսնում ես դու աղքատներին և կերա-  
կրում նրանց։ Օգնութեան կարօնները, փորձու-  
թեան մէջ ընկածները, տրտմութեամբ լցուած-  
ները շրջապատում են քեզ և իւրաքանչիւրին  
օգնում ես դու։ Ո՞րտեղ էին երեկ այդ բոլոր մար-  
դիկը։ Այսաեղ, որտեղ և այսօր են, սակայն երեկ  
դու նրանց չէիր տեսնում։ Միայն անդրադար-

ձուած լոյսի մէջ տեսնում ենք օգնութեան կա-  
րօններին։ Եւ այսօր քո հոգին մի հայելի է,  
որն ուղիղ է կախուած։ Անտեսանելին տեսանելի  
է դարձել, և շատերի համար ամենակարձ ժա-  
մանակամիջոցում դու անցնում ես մի յաւիտե-  
նական կեանք։ Յաւիտենական կեանքը, հաւատի  
կեանքը ոչ այլ ինչ է, եթէ ոչ Բարձրեալին  
տեսնելու կեանքը։ Հաւատը հոգեոյ մի դրութիւնն  
է, ուղիղ դրութեամբ կախուած մի հայելի է։  
Երբ օրն անցել է և դու երեկոյեան յետ  
նայես, կզարմանաս այն բանի վերայ, ինչ որ  
դու արել ես։ Դու չես գիտակցել, որ դու քեզ  
առանձնապէս լարել, մի բանի նմանուել և քեզ  
խաչել ես։ Դու քեզ Քրիստոսի մօտ էիր զգում,  
որը ամբողջ օրը քեզ հետ էր, որ դու առանց  
ձնշման նրա պահանջներին լսում էիր, որ առանց  
ոյժի, առանց աղմուկի, առանց մտադրութեան  
կերպարանափոխուել ես։ Դու չէիր երևակայում  
մի մեծ բան անել էական մի հետևանքի հասած  
վնելու համար։ Դու չէիր փառաւորուում քո  
գործով, իբրև մի համեստ վաստակ, որը քեզ  
մի նոր նմանօրինակ արդիւնք էր խոստանում։  
Դու միայն պարզապէս Քրիստոսի փառքն էիր  
ճանաչում, և այն ինչ որ մարդիկ քո չորս կողմդ  
նկատում են, որ դու արդար բան ես գործում,  
«Տիրոջ փառքն է»։ Երբ մի մարդ հայելուն  
նայում է, միայն հայելին չէ տեսնում նա, նոյն  
խակ մարդ նրա մասին չէ ել մտածում, այլ  
մարդ մի պատկեր է տեսնում։ Մի հայելի ուշա-

դրութիւն է գրաւում միայն այն ժամանակ, երբ  
նա իւր վերայ բծեր ունի:

Որ այս ճշմարիտ փորձառութիւն է և ոչ  
ցնորք, որ այդպիսի կեանքով ապրել կարելի է,  
որ մեր շուրջը մարդիկ կան, որոնք այդպէս են  
ապրում—պարզապէս իրականութիւն է։ Հազա-  
րաւոր վկաներից չեմ կարող մէկին մատնանիշ  
չանել։ Առաջիկայ հասածը մեր ժամանակի մի  
բարձր կրթուած մարդու խօսք է, մի մարդու,  
որ ինչպէս շատ քչերը, իւր երկրի բարելաւութեան  
համար օրուայ դառնութիւնն ու ամեն տանջանք  
կրել է, և որը ոչ թէ իւր ծերութեան հասա-  
կում, այլ իւր բազմարդիւն կեանքի ամենափա-  
ռաւոր ժամանակն է այդ խոստովանել։ Մի քանի  
կրճատումներով կթողնեմ որ համառօտ կերպով  
նա ինքը խօսէ։

«Այսօր երեկոյեան ես շատ քիչ բան ունիմ  
ասելու, և իմ ցանկութիւնս է այդ քիչ խօսքե-  
րով Քրիստոսի սուրբ անուան մասին խօսելու,  
որն իմ կեանքս է, երջանկութիւնս, յոյսա ու  
ապաւէնս է։ Ես պարտաւորուած եմ կանգնել և  
մի հայեացք ձգել անցեալի վերայ, և այս ան-  
ցեալի յիշողութիւնը խոստովանեցնում է ինձ, որ  
ես ոչինչ չեմ արել վկայելու համար Քրիստոսի  
միջոցով յայտնուած Աստուծոյ պատուի համար։  
«Աստուծոյ ողորմութեան շնորհիւ եմ այն, ինչ  
որ եմ։ Ես փառաւորում եմ յաւիտենական  
հօրը, երկնքի և երկրի Արարչին—որ մարդկային  
ցեղի գործերի վերայ հսկում է և իւր ողորմու-

թեամբը ծածկում նրանց, — Աստուծոյ յայտնու-  
թեան սուրբ մեծութիւնը։ Սակայն այդ Աստուծն  
է Յիսուս Քրիստոսի, Նրա կեանքի, Նրա սրտի  
բարբախման, Նրա խօսքերի, Նրա գործերի միջո-  
ցով յայտնուած, որին այսօր երեկոյեան խոստո-  
վանում եմ և Նրա մասին խօսել եմ ցանկանում։  
«Յիսուսի Քրիստոսի միջոցով, Աստուծոյ ակրոյ  
շնորհին եմ այն, ինչ որ եմ։

Եթէ ես ճիշտ կերպով նկարագրել ուզե-  
նամ, թէ դրանով ինչ եմ հասկանում, այն ժա-  
մանակ, պարզապէս խոստովանում եմ, որքան  
էլ որ իմ ծնօղաց շատ պարտական լինիմ, դրա-  
նից աւելի հայրենի տան միւս անդամներին,  
դրանից էլ աւելի կեանքի դպրոցին, բայց առա-  
ւել ևս պարտաւոր եմ իմ էութեան ու գոյութեան  
կերպարանափոխութեան համար Քրիստոսի էա-  
կան ներգործութեանը։ Ինչ որ իմ աչքիս առաջ  
բարոյական գեղեցիկ իգեալ կայ, Նրա պատկե-  
րից եմ վերցըել։ Իմ մտապատկերներս, այն բո-  
լորի համար ինչ որ մարդկային, ազնիւ, մաքուր  
է, Յիսուս Քրիստոսի մէջ են իրենց ծագումն  
առնում։ Շատերն իրենց բնաւորութեան կրթու-  
թիւնը պարտական են համարում հին դարերի  
առաջնակարգ մարդկանց գրքերի, օրինակ Պլու-  
տարքոսի աշխարհագրութեան ընթերցման, մի  
նախատիպի, որը մարդ այստեղ կամ այստեղ  
առաջնորդ էր ընտրում, որոնք պատմութեան  
մէջ մի անուն էին թողել, և սրանք այդպիսի  
մեծ մարդկանց ներշնչման ոյժի ներգործութիւնը

Երենց վերայ զգացել են: Սակայն ես չեմ կարող ասել, որ որ և է բանաստեղծ, կամ խորհող, կամ բարենորոգող կամ զօրապետ, կամ որ և է մի ուրիշ մարդ իմ մտածմունքով ու գաղափարով երբ և իցէ այնպիսի հարստութիւն ձեռք բերած լինի, քան ինչպէս Նազարէթացի պարզ Յիսուսն է: Աւելի քան մի քառորդ դար է, որ ես ներքին մի այլ մղման եմ հետևում, իմ բոլոր ձգտութներով Քրիստոսին ցանկանում, նրան ինձ համար չափ և ուզեցոյց դարձնելու համար: Ես ամէն բանի մէջ—վերջը համարեա ակամայից—հնարք եմ վնարել Քրիստոսին միայն մօտիկ լինելու: Վաղ առաւօտից իմ աչքս նրան է նայել, նրա սիրոյ հայեացքը, որ ինձ վերայ էր հանգչում, ճանաչել: Այն ժամանակ ինքն ըստ ինքեան պարզ էր թւում, որ Փրկչի այդ հայեացքից մի ներգործութիւն է ծագում, որն ինձ ամէն բանի մէջ ուղիղն էր ցոյց տալիս, կրքերը դադարեցնելու, մեծամտութիւնը սահմանական, ինքնասիրութեան վերայ իշխելու համար: Ոչ մի մարդուց չեմ ստացել այն գաղափարները, պատկերները, ներգործութիւնը, որոնք ինձ առաջնորդել են, ինչ որ Քրիստոսից, որն իմ ներքին աչքը բացեց:

Եւ սակայն այս բոլորը չէ: Ես կարող եմ ասել, որ իւրաքանչիւր մտապատկերի համար Տիրոջը՝ Յիսուս Քրիստոսին եմ պարտական, որը երկինքը ինձ համար իրականութիւն է դարձնում, իւրաքանչիւր մտածմունքի համար՝ որն իմ և

երկնքի մէջ ճանապարհ է հարթում: Հոգւոյ մէջ Աստուածային շնորհքի աճումը պատկերացնելու իւրաքանչիւր քայլը, որ իմ մէջ եղած աստուածային կեանքը պահանջում է, յաւիտենականութիւնից իմ ներքին աշխարհիս մէջ տռաջացած փառքը՝ պարտական եմ Փրկչին: Որովհետեւ իմ մարմնով ապրելս, նշանակում է ես ապրում եմ դէպի Յիսուս Քրիստոսն ունեցած հաւատով:

Այս ևս դեռ բոլորը չէ: Թէև երջանիկ ապագան է այն ճշմարիտ հողը, որի մէջ ամեն բան ծլում է, ինչ որ ինձ իմ երկնային կեանքիս մէջ երջանկութեան է հասցնում, այնուամենայնիւ ասում եմ, ինչ որ ամառն է իւր անցեալ ծաղկի, տերենների և խոտերի հետ համեմատած, միենոյն է Քրիստոս՝ իմ սրտիս ու հոգուս վերայ ունեցած իւր ներգործութեանց համեմատութեամբ: Երկնային սիրոյ բոլոր ծաղկիներն ու տերենները, ամբողջ ուրախութիւնը, որոնք իմ քրիստոնէական կեանքս են շրջապատում, նրանց ևս նոյն իսկ պահում և պահպանում եմ երջանիկ ապագայում, սակայն ինձ համար նրանք այնպէս են, ինչպէս ամառուայ տերեններն ու ծաղկիները համեմատած արեգակի հետ, որ ամառ է առաջ բերում: Քրիստոսն է ալֆա և օմեգա, սկիզբն և վերջը իմ ճշմարիտ կեանքիս:

Երբ ես Աստուածաշունչն եմ կարդում, շատ բան եմ սովորում, թէ չին կտակարաններից և թէ Պօղոս առաքեալի թղթերից. սակայն ամենից առաջ խոստովանում եմ, որ Քրիստոս է աւե-

տարանի պառողը։ Նրան եմ փնտրում աւետարանի մէջ և նրա սիրոյն եմ կարգում աւետարանը։ Ես Քրիստոսի սիրոյ մի սով եմ ճանաչում։ բոլորդ շատ թէ քիչ գիտէք, ի՞նչ է նշանակում սիրոյ սով ունենալ։ Զեր սիրոը միայն այն ժամանակ է հանգստանում, երբ նա իրեն տալ կարող է այն, ինչոց ինքը հէնց իւր մօտ կանգնողների հետ համեմատած բոլորովին զուրկ է։ Ժամանակ է եղել, երբ ես Քրիստոսի սիրոյ անասելի սով եմ զգացել։ Իմ մեղքիս գիտակցութիւնը այնքան զօրեղ չէ, երբ ես օրէնք եմ յիշում, այլ իմ մեղքիս գիտակցութիւնը հզօր է, երբ ես սիրոյ մասին եմ մտածում—զուցէ և այդ է պատճառը որ սէրն ու օրէնքը ըստ ինքեան միենոյնն են։ Երբ ես իմ Փրկչիս մօտենում եմ, երբ ես բաղձանքով դէպի նրա սէրն եմ դառնում, իսկոյն բորբոքում է իմ աննմանութեան, անկատարելութեան և կատարեալ անարժանութեան գիտակցութիւնը։ Իմ էութիւնս ու գործերս այնպէս մերկ չեն, քան այն ժամանակ, երբ ես խաղաղութեան մէջ զլիսակոր նրա առաջ կանգնած եմ, երբ նա իւր հայեացքն է ուղղում ինձ վերայ, որը ոչ թէ բարկութիւն, այլ սէր է արտայայտում։ Ուստի, որքան ցանկանում եմ սիրոյ արժանի չլինել, սիրուած չլինել, քան այն ժամանակ, երբ Քրիստոս է իւր սիրով իմ առաջ կանգնած։

Եթէ ես անցեալ կեանքիս վերայ մի հայեացք եմ ձգում, այն ժամանակ իմ յիշողութեան մէջ

առաջ են գալիս այն օրերն ու ժամերը առաւել կենդանի, երբ ես գիտակցօրէն Նրան մօտ եմ եղել։ Միւս մնացածը դժգոյն և աղօտ է, ինչպէս ամպեր՝ ընկած են հորիզոնի վերայ։ Լոկ միայն գիտենալը Քրիստոսի մասին—հաւատոյ դաւանանքը, սովորութիւնները, կանոնները, այն բոլորը ի՞նչ որ կարևոր է և մեքենայական ու քրիստոնէական կեանքի արտաքին կացութեանն է պատկանում, այն մասը, որ մտաւորապէս ըմբռնելի է— այս բոլորը թառամում և թափւում է ինչպէս ամռան ծաղիկներն ու տերենները, միայն այն է մնում, ի՞նչ որ կենդանի Քրիստոս է իմ սրտում»։

Ո՞վ կարող է կեանքի այս երաժշտութիւնը լսել իւր հզօր դաշնակով՝ Քրիստոսով, և բաղձանքով չցուել։ Այն, մինչև որ մենք այդ երաժշտութեան ձայնակցել չկարողանանք, բոլորովին չենք իմանայ թէ ի՞նչ է կեանքը։



### Առաջին քայլը

Միթէ կրօնը սովորական մի բարեկամութեան մէջ է։ Մի սովորական բարեկամութիւն—ով է խօսում մի սովորական բարեկամութիւն չկայ և գոյութիւն չունի։ Բարեկամութիւնը աշխարհի

մէջ ամենաազնիւն է,—նա այն գաղափարին է մօտիկ, ինչ որ մենք կրօնի տակ հասկանում ենք: Աստուած սէր է, և կրօնից մի աստուածային բարեկամութիւն ստեղծել, նշանակում է Նրա ամենամեծ անունը տալ, ինչպիսին որ մարդ միայն մտածել կարող է: Երբ սակայն «սովորական բարեկամութիւն» արտայայտութեան ընդդիմութեան հետ այն գաղափարն է կապուած, որ պարզ խօսակցութեան մէջ կրօնի ամենաբարձրի և սուրբի հետափուղութիւնը պարսաւում է, վախենամ թէ զբանով միայն վիճաբանութեան հիմք դրուած լինի: Շատերը հաւատում են թէ խօսքը մի գաղտնիքի է վերաբերում, երբ սրբութեան մասին է խօսւում—յատկապէս մի գաղտնիքի, որն Աստուծոյ հոգւոյ խորհրդաւոր բոլոր գործերին չի միանում: Նրանք հաւատում են, թէ սրբացումն պարունակում է մի տարօրինակ հրաշալի բան, մի գաղտնի գործողութիւն, որը միայն օծեալները կարող են հասկանալ: Ամէն կիւրակի օր հազարաւորները գնում են եկեղեցին այդ գաղտնիքի մէջ թափանցելու յուսով: Նրանք յաճախում են ժողովների, տեսարանական խօսակցութիւններ են ունենում, և ինչպէս յաճախ կարծում են նրանք թէ ահա այդ գաղտնիքը պիտի բացուի: Սակայն քօղը չէ բարձրանում: Նրանք կարդում են բարոյական գրքեր, և ինչպէս յաճախ նրանց թւում է թէ, մօտակայ հատածը վերջաբանն է, մօտակայ երեսը, նախադասութիւնը ամէն բան կըպարզէ, և

այն ժամանակ փնտրող հոգին թե առած այնտեղ կը թռչի: Սակայն այդ բոլորին ոչինչ չի հետևում, նրանք կարդում են միշտ և շարունակ, և միշտ նրանց յոյսը ի գերեւ է ելնում: Նրանք մնում են միշտ հաստատում կանգնած այն բանի վերայ, ինչի վերայ որ առաջ յոյս էին գրել և գիրքը վերջացնելուց յետոյ նրանք գարձեալ փընտրելու ճանապարհի վերայ են լինում: Ինչու նրանք ոչինչ չեն գտնում: Որովհետեւ գտնելու մի բան չկայ—ոչինչ այն բանից, ինչ որ նրանք փնտրում են: Ե՞րբ պէտք է մենք սովորենք, թէ սրբագործման հետամուտ լինել, նշանակում է Քրիստոսին հետամուտ լինել: Ե՞րբ պէտք է մենք փոխանակ երևակայական ցանկութեան կենդանի բարեկամի հետ յարաբերութիւն հաստատենք: Սրբագործումն բնաւորութեան գործն է և ոչ թէ զգացմունքի: Այսեղ խօսքը առօրեայ մարդկային կեանքի մէջ աստուածայինի պարզ ընդունելու մասին է, և ոչ թէ հոգւոյ խորհրդաւոր յափշտակման:

Ուրիշներն հաստատում են վերոյիշեալ ասածը հակառակ հիմունքով: Նրանց գանգատն այն չէ, որ կրօնը բարեկամութեան պատկերի մէջ պատկերացնելը մարդկային մտածմունք է, այլ որ նրանց համար այդ բանը շատ միատիքական է: Քրիստոսի խօսքը՝ «մնացէք իմ մէջ» բառացի կերպով կատարելը,—մինչդեռ մենք այդ մեր ամենօրեայ յարաբերութեան մէջ գործ ենք ածում—չափազանց է համարւում նրանց համար:

Նրանք ցանկանում են մի զգալի և շօշափելի կրօն։ Նրանք չեն պատկանում այն իդեալական հոգիներին, որոնք միայն մի նշան՝ մարդկային հասկացողութիւնից վեր մի գաղտնիք են փընտրում, այլ պատկանում են սովորական այն բնաւորութիւններին, որոնք հաճոյքով ամէն բան սովորական ձևով են կարգադրում։ Սակայն կրօնի հէնց այս հարցը ի՞նչպէս կարող է թոյլ տալ շօշափելի տարրերի վերայ կանգ առնել։ Արդեօք ամէն մի բարեկամութեան գեղեցկութիւն նրա զարմանալի ներքինի մէջ չէ։ Արդեօք մեր ամբողջ կեանքը գաղտնիքների և հրաշքների մի շղթայ չէ։ Ընտանեկան կեանքը, երկրային մէրը, կրօնը լի են դրանցով։ Ինչու Քրիստոսի հետ ունեցած մարդու յարաբերութեան մէջ տարօրինակ են գտնում այն, ինչ որ մարդկանց միմեանց հետ ունեցած յարաբերութեանց մէջ բնական է։

Եթէ մէկին կամ միւսին դեռ ծանր պիտի թուայ հոգւոյ այս գաղտնի կապը Քրիստոսի հետ հասկանալը կամ իրականացնելը, դրանով գուցէ նա աւելի թոյլ է տալիս առօրեայ կեանքի նմանօրինակ պարզ յարաբերութեանց շնորհիւ մի քայլ ևս առաջ գնալ։ Ի՞նչպէս եմ Շէքսպիրին կամ Դանտէին ես ճանաչում։ — Մի միայն նրանց խօսքերի ու մտքերի հետ ունեցած յարաբերութեանց շնորհիւ։ Կան մարդիկ, որոնք Դանտէին աւելի լաւ են ճանաչում, քան իրենց սեպհական հօրը։ Դանտէն նրանց վերայ աւելի

ազգեցութիւն ունի, իբրև մտաւոր ներկայութիւն, նա նրանց աւելի մօտ է, իբրև մտաւոր զօրութիւն—աւելի իրական է։ Ի՞նչն է պատճառը, որ Շէքսպիրից ու Դանտէից էլ մի մեծ անձնաւորութիւն, որ մի ժամանակ աշխարհիս վերայ ապրել է, որ հզօր խօսքերի մի կտակ է թողել, որ ամենայն տեղ, մեր շուրջը կենդանի գործով իւր հզօրութիւնն է ցոյց տալիս այսօր էլ—նրանց պէս չի կարողանում ուսուցանել, ոգնորել, և կամ իրեն հետ յարաբերութիւն ունեցող մարդկանց մէջ իւր պատկերը տպաւորել։ Ես չեմ ասում, որ Քրիստոսի ազգեցութիւնը սահմանափակւում է, ընդհակառակը, այդ ազգեցութիւնը աւելի ու շատ մեծ է։ Ինքը Քրիստոս, իւր հետ եղած հոգւոյ կապը իբրև մի բարեկամութիւն ներկայացնելը պարսաւելուց և չհաւանելուց շատ հեռու լինելով, մեզ այդպէս է ցոյց տուել։ «Մնացէք իմ մէջ» նրա վերջին խօսքերից մէկն էր ուղղուած իւրայիններին։ Եւ որովհետեւ նա մարդարէացել էր, որ այս պարզ յորդորը շատ զարմանալիքներ պիտի կատարէ, հետեւեալ գործնական խօսքերն էլ կցում է։ «Երբ դուք իմ մէջ մնաք, իմ՝ խօսքելու հը ձեր մէջ կմնամ»։

Ակսենք նրա խօսքերից։ Խօսքերը չեն կարող երկար ժամանակ դիմագուրկ մնալ։ Քրիստոս ինքը մի խօսք էր—մի խօսք որ մարմին դարձաւ։ Թոյլ տուէք, որ նրա խօսքերն էլ մարմին առնեն, գործեցէք, ապրեցէք նրանիամեմատ,

և դուք էլ Նրա հետ կ'ապրէք: «Ով իմ՝ պատշուհներս կատարումք, աս ե, որ ինձ այրում ե»: Լսեցէք Նրան, և դուք Նրան կսիրէք: Մնացէք Նրա մէջ, և դուք ոչ ոքի, բացի Նրանից, չէք լովի: Հոգ տարձիք Նրա բարեկամութեան համար: Ապրեցէք Նրա հետևողների շրջանում, Նրա հոգւոյ՝ իբրև Նրա ներկայութեան մէջ, և այն, ինչ որ դուք գործել կըկարողանաք՝ խօսքով արտայացածել չի լինիլ: Թաղ ձեր նպատակը այդ լինի, այն սկիզբը, որից դուք ծագում էք: Եւ եթէ դուք շարունակ Նրա անմիջական մերձաւորութիւնը չէք զգում, այն ժամանակ փնտրեցէք Նրան միջնորդաբար այն բոլորի մէջ, ինչ որ ձեզ շշափում է: «Երկիրս լի է Նրա փառքով»—Նրա էութեան փառքը մենք ամեն տեղ ենք դտնում: Քրիստոս է աշխարհիս լոյսը, և աշխարհիս մէջ շատ բան՝ նոյն խակ ամպերը, կարող է Նրա լոյսը մեզ ցոլացնել: Իւրաքանչիւր թերթից մենք արեգակի լոյսն ենք ծծում, որը թերթից անցնում է մեր ներսը և ձմբան օրերին, երբ մենք արեգակի լոյս չենք տեսնում, մեզ թարմացնում է: Քրիստոս լուսաւորում է մեզ մարդկանց, զրքերի՝ պատմութեան, բնութեան, երաժշտութեան ու ճարտարապետութեան միջոցով: Այդ բոլորի մէջ փնտրեցէք Նրան: «Մարդ պէտք է իւրաքանչիւր օր մի գեղեցիկ պատկեր տեսնի, մի գեղեցիկ երաժշտութիւն լսի կամ մի գեղեցիկ պատմութիւն կարգայ»: Եթէ այս խորհրդաւորութիւն է (Mystizismus), զրա վտանգը Նրա

մէջ է, որ մենք այդ մասին շատ ընդարձակ խօսել չենք կարող:

Մի կարծէք թէ խակալէս այս ոչինչ է, որովհետեւ դուք տեսնել չէք կարողանում, թէ դուք ինչպէս էք մեծանում և մեքենայի հառաջանքներն ու հեծկլտանքները չեն լսում: Ամէն մեծ բան աճում է լուսութեան մէջ: Մարդ կարող է խակալէս տեսնել թէ ինչպէս սունկը մեծանում է, բայց երեխայի մեծանալը —ոչ երբէք: Դարվինն ասում է, զարգացումը առաջ է գնում, «բազմաթիւ իւրար յաջորդող թեթև կերպարանափոփութիւնների շնորհիւ»: Պօղոս առաքեան արդէն այդ շատ լաւ գիտէք, ուստի և իբրև էական մասն՝ իւր գրութիւնն աւելի գեղցիկ խօսքերով է հիւսել:

Նա հետզետէ աճող հոգիներին մխիթարելով ասում է, որ նրանք, աճում են ովհառքի մի աստիճանից սիւսն անցնելուվ»: «Օր աւուր ներքին մարդը նորոգւում է», ասում է նա մի այլ տեղ: Ամէն մի կատարեալ գործ առաջ է գնում դանդաղ, ամէն մի ճշմարիտ զարգացումն—փոքրիկ, թեթև աննկատելի կերպարանափոխութիւնների միջոցով: Որքան բարձր է գործարանաւորութիւնը, նոյնչափ էլ դանդաղ է յառաջնաշղացութիւնը: Երբ կենսագիրը կեանքի երկար աստիճանների վերայ մի հայեացը է ձգում, այն ժամանակ տեսնում է ստորին կենդանիներին ներքուստ մի ժամուայ մէջ փոփոխուած: Դրանցից մի քիչ բարձրները պահանջում են մի օր

կատարելագործուելու, իսկ աւելի բարձրները շաբաթներ և ամիսներ, Ստորին աստիճանի վերայ գտնուածները սակայն ամբողջ տարուայ աճման շնորհիւ են միայն հասնում կատարելագործութեան: Եթէ մի երեխայ և մի կապիկ միենոյն օրը ծնուին, այն ժամանակ կապիկն արդէն իւր կարողութեանց կատարեալ տէր է լինում և գործ է դնում զբանց իբրև իւր կեանքի պահանջ, մինչդեռ երեխան գեռ օրօրոցում է մեծանում: Իսկ երկրային կեանքը օրօրոց է յաւիտենականութեան համար: Ինչպէս որ մարդը կենդանու հետ համեմատած դանդաղ է աճում, նոյնպէս էլ հողերը մարդը—բանականի նկատմամբ: Պէտք է մի հաստատուն հիմք լինի, որի վերայ յաւիտենական լոյսը հանգչել կարողանայ: Քրիստոնէի բնաւորութիւնը յաւիտենականութեան համար է սահմանուած, և ով կարող է զարմանալ և կամ արտնջալ, թէ ինչու նրա կատարելութիւնը հէնց այսօրուանից չէ աւարտում:

Սակայն կարեոր է աստուածային մի ապաէն ունենալ, որի վերայ հոգւոյ աճեցումն պիտի յուսայ: Ո՞րքան անմեղագիր է սեպհական տձեռնութեան անհամբերութիւնը մեր տգեղութեան գիտակցութեան մէջ, սուրբ, բարի, գեղեցիկ Քրիստոսի հետ համեմատած, որքան անմեղագիր մեր տենչանքն ու երկիւզը նրան նման լինելու: Այնուամենայնիւ պէտք է աներկիւդ և անկասկած Պօղոս առաքեալի խօսքերին հաւա-

տանք: Զէ որ նա վերջացնում է «հրաւեռ Տիլոջից, որ չոգի հ» խօսքերով: Այս Հոգին իւր գործը կանէ, կը կատարէ: Պէտք է յաղթել հոգեոր սըրբագործման ճանապարհների անմիջական և տեսանելի յառաջաղիմութիւնը արագ սկսելու աւելի պակաս ցանկութեան փորձութեանը, պէտք է արդիւնքը նրանով չփասենք, փոխանակ մեր հայեցքը ներգործող պատճառների վերայ անթարթ ուղղելու, որ մենք հետևանքների համեմատ աւելի շատ էինք սպասում քան թէ ստացանք: Ամէն մի նկարիչ հասկանում է, որ նա միայն այն ժամանակ նեգատիւց արտասպել կարող է, երբ արեգակի լոյսը նրա վերայ ընկնի: Եթէ նկարիչը յաճախ նայում է, արդեօք պատկերը նկարուել է թէ ոչ, դրանով միայն նա արգելք է լինում պատկերի նկարուելուն: Նոյնպէս էլ, թէկ հոգւոյ խոհական վերահսկումն օգտակար է, բայց յաճախ նայելը հոգւոյ մէջ վնասակար է: Դու արգելում ես լուսատպումն, երբ յաճախ նայել ես ցանկանում, թէ արդեօք նա կը յաջողութի՝ քաշած հոգսերիդ համեմատ: Մի նոր սրտի ստեղծագործութիւնը, նոր և արդար հոգին—Աստուծոյ ամենակարողութեան գործն է: Այդ թող նրա ստեղծագործող ձեռքին: Նա «որ ձեր մէջ բարի գործ է սկսել, նա էլ նոյնը կվերջացնէ մինչև Յիսուս Քրիստոսի գալստեան օրը»:

Ընդհակառակը, եթէ մէկը հասկանում է խօսուած նիւթի ծանրութիւնն ու նշանակութիւնը իւր յառաջաղիմութեան վերայ սառնա-

բիւն կերպով չի նայիլ։ Աշխարհի մէջ միայն մի բան կայ, որի համար հոգս քաշել արժանի է, այդ Քրիստոսին նման լինելն է։ Սրա համար միւս բոլորը, նոյն իսկ գովասանքի արժանի խենթութեան համազ ձգտումները—բոլորը դատարկ անոտի հետևանքի են հասցնում։ Միայն այն մարդիկ որ սոյն ձգտման մէջ իրենց բարձր նպատակը ճանաշում են, և սուրբ տեսչանքով լցուած հետեւում Նրան, կարող են յուսալ հետզ-հետէ մօտենալով Նրան համանել։ Եւ եթէ մինչե այժմ թուացել է թէ ամէն բան մեր անգործ հանգստութիւնից է կախուած, թոյլ տուէք այժմ խորին համոզմամբ ասել, որ ամէն բան մեր գործելուց է կախուած։ Դատարկ պաշտամունքի մի կրօն հրեշտակների համար թող կրօն լինի, բայց ոչ երբէք մարդկանց համար։ Ճշմարիտ յոյսը ոչ թէ համեստ ճանաշողութեան, այլ լուրջ մրցման վերայ է յենւում։ Ճշմարիտ կեանքը ոչ թէ համբերութեան մէջ է, այլ խոհական իրականութեան մէջ է։ Ոչ թէ իդէալի սահմա-նում, այլ նրան շրջապատող իրերի մէջ է մարդ իւր սրբազործումն գտնում։ Հաստատուն վճիռ, աշխատութիւն, ծանր գործ և անձնազոնութիւն, այն, նոյն իսկ մրցումն՝ մինչե արեան վերջին կաթիլի թափելը—այս բոլորը այնպիսի գործեր են, որ մենք սկզբում իբրև անպէտ մի կողմը դրինք, իսկ այժմ նրանք իրենց արժէքն են ստանում և մեզ վերայ տասնապատիկ աւելի պարտականութիւն են դնում։ Եւ ինչո՞ւ Որով-

հետեւ միայն նրանք են թօթափում մեր հոգին իւր անգործութիւնից, որովհետեւ միայն նրանք հոգուն իսկական դիրք տալ և այդ գրութեան մէջ, ուր հոսում են հոգեւոր ոյժերն ու ներդոր-ծում՝ պահպանել կարող են։ Սյատեղ հարկաւոր է կամքի բոլոր ոյժը ի մի ժողովել, հայելին մաքուր և իսկական ուղղութեան մէջ պահելու համար։ «Պարզ կերպարանքը», որը Քրիս-տոսին են ուղղած, մեր հոգսի առարկան պէտք է լինի, մենք պէտք է քօղը ցած թողնենք այն ժամանակ, երբ մեզ անմաքուր պատկեր-ներ են մօտենում։ Արդեօք ձեզանից մէկը կամ միւսը չէ տեսել աստղագէտի, որ և է աստղի պատկեր նկարելիս։ Դիտանոցի մթնասենեակը մտնելուց յետոյ, նա ամենից առաջ մի լոյս է վառում։ Արդեօք զբանով ասաղը տեսնելու։ Ո՛չ, միայն մեքենան ուղելու, որով ասաղը տեսնել է ուղում։ Աստղն ինքն է հոգս պատճառում նկարչութեան։ բայց աստղագէտն է, որը նկա-րելը հնարաւոր է գարձնում։ Երկար ժամանակ զբաղում է նա աղօտ լոյսի մէջ իւր պատրաս-տութեամբը, խողովակները պտտում է, մաքրում է ոսպնածի ապակիները, գնում է ցոլացուցիչ-ները և միայն այս բոլոր աշխատանքից յետոյ գարձնում է ամենաճիշտ կերպով ուղղած հեռա-գիտակը աստղի վերայ։ Այն ժամանակ հանդ-ցնում է նա իւր լոյսը և թոյլ է տալիս աստղին իւր պատկերը թիթեղի վերայ դուրս բերելու։ Քրիստոնեաների օրուայ գործը պէտք է լինի

իրենց մեքենան ուղղելը։ Երբ նա այդ աշխատանքը կատարել է, կարող է իւր լոյսը հանգցնել։ Քրիստոնէութեան բոլոր վկայութիւնները, որոնք նրան շատ հեռու են տարել, հաւատի իւրաքանչիւր գորացումն, ասոււածպաշտական բոլոր միջոցները, այն ամէնը, որով եկեղեցւոյ էական քրիստոնէութիւն է պահանջում, բոլոր աղօթքները, հոգեոր բոլոր ճանաչողութիւնները, կամքի լարումն, բոլոր այս պատրաստական գործերը, այս ծառայութիւնները մոմի լոյսի վերջին բոպէին մի կողմն են թողնուում։ Իմաստուն է նա, որ իւր լոյսը անմիջապէս վառում է, իմաստնագոյն է նա, որ ձեռքից այդ լոյսը բաց չի թողնում։ Առաւոտեան, այո, մի քանի բոպէից յետոյ, մարդու իւեղճ, խաւարած և արաւաւորուած հողին այդ լոյսի կարիքը կզգայ, մի աւելի լաւ պատկեր ընդունելու, ոսպածե ապակուց փոշին հեռացնելու, հայելին աշխարհի ջնջից, որ նրան պղտորել էր՝ մաքրելու համար։

Աստղի մեղքը չէ, եթէ հեռաղիտակը շարունակ նրան է ուղղւում, նա մի պարզ հաստատուն կէտ է. նա չէ շարժւում, աշխարհն է—որ պտաւում է։ Այդ պտաճառով իւրաքանչիւր օր, իւրաքանչիւր ժամ նորից պահանջում է, հոգին իւր նախատպի համեմատ ուղղելու։ Դիտանոցում հեռաղիտակը հետեւում է աստղին մեքենայի ջնորհիւ, իսկ հոգւոյ մեքենան—կամքակի է։ Եւ թէն հոգւոյ հայելւոյ մէջ Տիրոջ պատկերն է արտացոլում, սակայն և այնպէս կամքն է,

որ աշխատում է հայելին ուղիղ գրութեան մէջ պահել, որպէսզի աշխարհի անիւը չխախտէ պատկերը գծագրուելուց (նկարուելուց)։ Ինչ որ մենք «Քրիստոսի հետևող» ենք անուանում, «չ այլ ինչ է, եթէ ոչ հոգին յառաջագլութեան մէջ պահելը, որպէսզի երկիրը նրանից իւր լոյսը չլիէ։ Խնդիրն այստեղ մի գիտակցական՝ աշխարհի շարժման հակառակ գործունէութեան մասին է, որ հայելին ճշմարտապէս պիտի ուղղէ դէպի նրան՝ որը պէտք է արտացոլուի, դէպի մի «պարզ կերպարանք», հոգւոյ կարողութեանց մի հաստատուն ընծայումն, չնայած փոթորիկներին և երկրաշարժին, կրակին ու սրին, և այս բոլորը անընդհատ աշխատանքի ջնորհիւ։ Սրբագործումն Քրիստոսի գործն է. բայց նա միենոյն ժամանակ մարդկանցից էլ է կախուած. երկուսի համար էլ սրբագործումն թէ գործնական և թէ տեսական է։ Իմաստուն է սակայն նա, որ ամեն օր ասում է՝ ինձանից և կախուած գործը։

---

Փարիզի «Գեղեցիկ արուեստից» պատկերասրահում (Galerie des Beaux Arts) կանգնած է մի փառաւոր արձան։ Այդ արձանը վերջին գործն էր մի մեծ ճարտարապետի, որը, ինչպէս և շատ շատերը, աղքատ էր և միայն մի փոքրիկ սենեակ ունէր, որ նրան թէ իրեկ գործարան և թէ իրեկ ննջարան էր ծառայում։ Մի գիշեր, երբ նա իւր աշխատանքը գեղեցիկ կերպով վերջացրել էր,

յանկարծ դուրսը սարսափելի սառնամանիք սկսուեց։ Յրտի ազգեցութեան տակ արթնացաւ արուեստագէտը և երկիւղը պատեց նրան իւր արձանի համար, որովհետեւ սենեակը չէր տաքացրած։ Նա մտածում էր դեռ ևս թաց կաւի մասին, մտածում էր, որ ջուրը կարող է սառչել և մի ժամում իւր երազած կեանքը կարող էր ոչնչանալ. նա վեր կացաւ իւր աղքատիկ անկողնից և վերմակով ծածկեց իւր ձեռքի աշխատանքը։ Միւս օրը հարևանները արուեստագէտին դաշն մեռած, իսկ նրա գործը կենդանի էր։

Մեր գոյութեան նպատակներից մէկն այն է, որ Քրիստոսի պատկերը մեր մէջ կենդանի պահենք։ Ահա այդ է ամենազեղեցիկը, միւս բոլորը պէտք է մի կողմը թողնուի. «Մինչեւ որ Քրիստոս ձեր մէջ կերպարանիք առնե», հնչում է քրիստոնէի կոչումը։ Եւ քանի որ այդ չէ կատարուել, նրա խնդիրն անկատար է, նրա կրօնի թագը պակասում է, նրա կեանքը ճշմարիտ բովանդակութիւնից զուրկ է։ Արդեօք այս մեծ գործը մեր մէջ սկսուած է։ Ի՞նչպէս, երբ պէտք է մենք այլ մարդ գտննանք։ Ժամանակը մեզ փոխել չէ կարող։ Մի միայն Քրիստոս կարող է այդ։ Ապա, ոռընման գնանք Յիսոս Քրիստոսի մօս։



**ԹԱՐԳՄԱՆՉԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆԵՐԻՑ**

A. Aharonian, Bilder aus Türkisch—Armenien, Etschmiatsin . . . . — 50 k.

---

Գ Ի Ն Ե Լ 15 Կ Ա Պ.

**Դիմել էջմիածին, ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ**